ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Սուրեն Մինասյան, ՀՀ ֆինանսների նախարարության միջազգային համագործակցության վարչության օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության համակարգման բաժնի գլխավոր մասնագետ,

2. Գործուղման վայրը և ժամկետները.

ք. Կոնստանցա, Ռումինիայի Հանրապետություն, 2024 թվականի հունիսի 3-ից 6-ը,

3. Հրավիրող կողմը.

Ռումինիայի Հանրապետության զարգացման, հանրային աշխատանքների և վարչարարության նախարարություն

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Մասնակցություն Եվրոպական հարևանության գործիքի Սևծովյան ավազանի անդրսահմանային համագործակցության 2014-2020թթ. ծրագրի (այսուհետ՝ «Ծրագիր») փակման արարողությանը

5. Քննարկված թեմաները.

Այցի շրջանակներում քննարկվել են Ծրագրի արդյունքները, որոնք պետք է հիմք հանդիսանային Ծրագրի հաջորդ շրջափուլի (2021-2027թթ.) արդյունավետ իրականացման համար:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Այցի շրջանակներում կազմակերպվել են երկու հիմնական առանցքային հանդիպում-քննարկում.

ա) Ծրագրի ***համատեղ մոնիտորինգային հանձնաժողովի 9-րդ նիստի*** շրջանակներում Ծրագրի համատեղ տեխնիկական քարտուղարության կողմից ներկայացվել են շահառու ծրագրերի ընդհանուր կարգավիճակն ու իրականացումը՝ կենտրոնանալով տեխնիկական և

ֆինանսական առաջընթացի վրա, քննարկվել են ծրագրերի իրականացման ընթացքում ի հայտ եկած հիմնական խնդիրները,

բ) Ծրագրի ***փակման լիագումար նիստ,*** որի ընթացքում շահառու երկրների պատվիրակությունները ներկայացրել են Ծրագրի արդյունքները, քաղված դասերն ու հիմնական մարտահրավերները, որոնք պետք է հասցեագրվեն Ծրագրի հաջորդ շրջափուլի ընթացքում: Նիստի ընթացքում ներկայացվել են նաև շահառու մի շարք հաջողակ ծրագրեր:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Այցի շրջանակներում որոշումների ընդունում և փաստաթղթերի ստորագրում չեն նախատեսվել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Հաշվի առնելով Ծրագրի շրջանակներում հայկական շահառուների (ՀԿ, հիմնադրամ, համայնք) հետաքրքության/ներգրավվածության համեմատաբար ցածր մակարդակը՝ զգալի անելիքներ են պահանջվում Ծրագրի հրապարակայնացման ուղղությամբ, որի շուրջ աշխատանքները ենթակա են համակարգման Ծրագրի ազգային մարմնի կողմից:

9. Ստորագրությունը, ամսաթիվը՝

Սուրեն Մինասյան

10 հունիսի, 2024թ.